ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

ԱՐԾԻՒԵԱՆԻ

Եւ այսօր փայլեց առաւօտս ուրախ.
Ես ողջունեցի գարնան արշալոյս,
Ձեռք առայ քնար երգելու անվախ
Ազատ զեղմունքը անվերհեր հոգոյս։

Եւ ինձ իւր անշէջ, դիւթիչ հայեացքով
Դարձեալ փաղաքշեց կենսատու արև.
Սլացաւ զեփիւռն ականջիս մօտով
Եւ ես լսեցի. «բարև քեզ, բարև»...

Եւ թռչունների անթիւ երամներ
Ճախրելով շուրջը ինձ աւետեցին
Նորից քաղցր լոյս, քաղցրը երազներ,
Եւ անդորը վիճակ իմ մատաղ կեանքին։

Հրճւիր դու ազատ, սիրտ իմ յուսավառ,
Վայելիր կեանքի բուռն քաղցրութիւն.
Հրճւիր, քանի քեզ ժպտում են պայծառ
Ե՛ւ անամպ երկինք և՛ վառ բնութիւն...

Անվերջ չէ գարուն... Կը գայ ցուրտ ձմեռ,
Կը թօշնի վարդը, կը լռի սոխակ,
Եւ այնուհետև մնաք բարեաւ և՛ սէր,
Ե՛ւ անվերջ գգւած ցնորք ու տենչանք...

Մոսկուա. 1889 թ. 5 փետրուարի